ՊԱՏՄԱԲԱՆԱԿԱՆ

Վ. Ս. ՍԱՀԱԿՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր

ԱՐՑԱԽԸ ՀԻՆ ԵՎ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ

Ուրարտական արձանագրությունները, հունահռոմեական և հայ հին ու վաղ միջնադարյան պատմիչներն ու աշխարհագետներն իրենց տարալեզու և տարատեսակ, ուղղակի ու անուղղակի հաղորդումներով միանգամայն պարզորոշ ու առանց երկմտանքի ցույց են տալիս, որ Արցախը Մեծ Հայքի մարզերից մեկն էր, նրա 10-րդ նահանգը՝ իր բնիկ հայ բնակչությամբ, որ խոսել է հայերենի արցախյան բարբառով և գործուն մասնակցություն ունեցել մայր երկրի ներքին ու արտաքին հարաբերություններում[1]:

Արցախի հայկական պատկանելիությունը առավել ցայտուն ձևով ներկայացված է հայ հեղինակների երկերում: Այդ իմաստով ուշագրավ են Կուրի՝ որպես Մեծ Հայքի ու բուն Աղվանքի միջև սահմանային գետ լինելու մասին Փավստոս Բուզանդի ու Անանիա Շիրակացու մեկից ավելի հաղորդումները: Ավելին, ցույց տալով, որ Կուրը սահման էր Հայոց և Աղվանից միջև, Բուզանդը մատնանշում է, որ այն այդպիսին էր վաղ ժամանակներից ի վեր: Խոսելով 4-րդ դարի իրադարձությունների մասին, երբ Աղվանքը, օգտվելով Հայաստանի ժամանակավոր թուլությունից, հարձակվել էր նրա վրա և նվաճել սահմանամերձ մի քանի շրջաններ, պատմիչը գրում է, որ 371 թ. Ջիրավի ճակատամարտից հետո հայերը սպարապետ Մուշեղ Մամիկոնյանի հրամանատարությամբ կովի են ելնում Աղվանքի դեմ և ետ խլելով գրավված տարածքները՝ Կուր գետը, ինչպես նախկինում էր, կրկին սահման են դարձնում իրենց երկրի ու Աղվանքի միջև. «Եւ զԿուր գետ՝ որպէս և յառաջն յեալ էր, ընդ երկիրն Աղուանից և ընդ երկիրն Իւրեանց սահման արարեալ կացուցանէին»[2]:

Բուզանդից անկախ Կուրը Աղվանքի հարավային, իսկ Հայաստանի էլ հյուսիսային սահման է ճանաչում Շիրակացին: «Աշխարհ Աղբանիա,- գրում է նա,- այսինքն Աղուանք, յելից Վրաց, յերի Սարմատիոյ առ Կասկասով միանչև ցՀայոց սահմանաւ, առ Կուր գետով»[3] և շարունակելով միտքը՝ շեշտում, որ բուն Աղվանքն «ընդ մէջս է մեծի գետոյս Կուրայ եւ Կովկաս լերինն»[4]: Ուրեմն, Կուրը, ինչպես երևում է բերված վկայություններից, սահման է եղել Հայոց և Աղվանից միջև ու նրանց բաժանել միմյանցից՝ ձախափնյակը կամ հյուսիսային շրջանները թողնելով Աղվանքին, իսկ աջափնյակը, այն է հարավային

---

[1] Այս հարցն էլ առաջին անգամ չէ, որ արծարծվում է: Այս կապակցությամբ ևս գրվել և հրապարակվել են գրքեր, որոնցից են **Բ. Ուլուբաբյան**, Դիվագներ հայոց արևելյան կողմանց պատմության, նույնի, Արցախի պատմություն (սկզբից մինչև մեր օրերը), Երևան, 1994, **А. А. Акопян,** Албания-Алуанк, **Г. С. Сваазян,** Арцах в исторических первоисточниках, Լրաբեր հաս. գիտ. 1989, թիվ 11, էջ 3-14, **Վ. Բալայան,** Արցախի պատմություն հնադարից մինչև մեր օրերը, Երևան, 2002:

[2] **Փաւստոսի Բուզանդացւոյ** Պատմութիւն Հայոց, Երևան, 1987, էջ 322 (ընդգծ- Վ.Ս.):

[3] Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յատկացածովք նախնեաց, Վենետիկ, 1881, էջ 28-29:

[4] Նույն տեղում, էջ 29:

շրջանները՝ Մեծ Հայքին: Արցախը, որ աշխարհագրորեն ընկած է Կուրի աջափնյակում, պարզ է, գտնվելու էր Մեծ Հայքի կազմում, ուստի և այլ պատկանելիություն, քան հայկականն էր, չէր կարող ունենալ:

Կուրի Հայոց և Աղվանից միջև սահմանային գետ լինելու մասին բերված տեղեկությունները, որոնք հաստատվում և ուժ են ստանում հունահռոմեական Ն. Ք. 1-ին - Ք. Հ. 5-րդ դարի պատմիչների ու աշխարհագետների (Ստրաբոնի, Պլինիոս Ավագի, Պտղոմեոսի, Ապիանոսի, Դիոն Կասիոսի, Ստ. Բյուզանդացու և այլոց) նմանաբնույթ հաղորդումներով, բավական էին, որպեսզի մեկընդմիշտ վերջ դրվեր Արցախի պատմության նենգափոխման փորձերին, բայց քանի որ դրանք չեն դադարում, ուստի շարունակենք՝ բերելով Հայոց երկրի ներքին և արտաքին հարաբերություններում Արցախի ունեցած մասնակցության մասին օրինակներ, որոնք չէին լինի, եթե այն հայկական չլիներ: Գրելով, որ երբ հարկ եղավ Գրիգոր Լուսավորչին հայոց կաթողիկոս օծելու համար Կեսարիա ուղարկել և Տրդատ Մեծը նրան ուղեկցողներ նշանակեց, վերջիններիս թվում ընդգրկելով նաև Արցախի կամ, ինչպես այդ ժամանակ էին ասում, Ծավդեացվոց իշխանին, հայոց դարձի պատմիչը հատուկ շեշտում է, որ այդ ուղեկցողները «իշխանք են ընտիրք, կուսակալք, կողմնակալք, հազարաւորք, բիւրաւորք ի մէջ Հայաստան աշխարհի տանն Թորգոմայ»[5]:

Մատենագրական նման վկայությունը աներկբայորեն ցույց է տալիս, որ Արցախը ոչ միայն ուներ հայկական պատկանելիություն, այլև Հայոց աշխարհի գլխավոր, ընտիր ու առաջատար իշխանություններից էր, որն իր ծանրակշիռ դերն ուներ մայր երկրի արտաքին հարաբերություններում: Ի թիվս այլ իշխանությունների, Ծավդեացվոց կամ Արցախի իշխանությանն էր վստահված իր հազարանոց զորագնդով պահպանելու Հայոց աշխարհի հյուսիսային դուռը, որ Կովկասյան լեռնանցքներից ելնող վտանգի՝ հյուսիսային քոչվոր ցեղերի անընդհատ ասպատակությունների հետևանքով ուժերի մշտական լարում ու աչալրջություն էր պահանջում: Նրա այս դերը հստակ նշված է «հայոց ազատաց և տանուտերաց» ռազմական ուժը ցույց տվող փաստաթղթում՝ «Զորանամակում»[6] և մատնանշում է, որ Արցախն հայոց այն նախարարություններից էր կամ կուսակալություններից, որ իր մարտական ուժերով պահպանում էր սեփական հայրենիքի անվտանգությունը: Հայոց երկրում Արցախի ունեցած բարձր դիրքն արտացոլված է նաև արքունիքում հայ նախարարների հարգն ու պատիվը ցույց տվող փաստաթղթում՝ «Գահնամակում», որտեղ այն «Սիւնեաց երկրորդն» անվամբ զբաղեցնում է 28-րդ տեղը 70 նախարարական տների շարքում[7]:

Բերված օրինակները միանգամայն անառարկելիորեն հաստատում են վերը հայտնած մեր այն միտքը, որ Արցախը հայկական նահանգ էր և ակտիվ մասնակցություն ուներ պետական կարևորություն ներկայացնող գործերում:

Բազմաթիվ են այս պատմական իրողությունն ապացուցող անուղղակի տեղեկությունները: Դրանցից են Հայոց մյուս եզրային նահանգին՝ Ուտիքին վերաբերող հաղորդումները: Վերջիններս նրան ներկայացնում են որպես Կուրի աջափնյակում տարածված բուն հայկական նահանգ, որ Երվանդունիների գլխավորած հայոց միասնական թագավո-

[5] Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Երևան, 1983, էջ 446 (ընդգծ. - Հ. Ս):

[6] **Н. Адонц**, Армения в эпоху Юстиниана, Ереван, 1971, с. 251.

[7] Նույն տեղում, էջ 250:

րության (Ն. Ք. 6-րդ - Ն. Ք. 3-րդ դդ.) տարածքի մաս է կազմել և այդ վարչաքաղաքական կարգավիճակով էլ անցել դարից դար: Եվ որովհետև Ուտիքը, ինչպես այն ներկայացված է աղբյուրներում[8], հայկական մարզ էր, ապա անտարակուսելի է, որ Կուրի աջափնյակում նրանից էլ հարավ ընկած Արցախը ևս Երվանդունիների ժամանակներից սկսած գտնվելու էր նշված թագավորական հարստության իշխանության ներքո և վարչականորեն կազմելու էր նրանց երկրի մարզերից մեկը:

Արցախը Արտաշեսյանների ժամանակ էլ հայկական էր, քանի որ Արտաշեսի հաղթանակով Երվանդյան Հայաստանի ողջ տարածքը, ամանապես և Արցախը, հաղթողի իրավունքով անցնում է այդ նշանավոր հարստության տիրապետության տակ: Ի դեպ, դա ապացուցում են նաև մատենագիտական տվյալները և հաստատում հնագիտական պեղումները: Սեբեոսը, ապա և Մովսես Կաղանկատվացին մեզ հետաքրքրող կողմերում հիշատակում են «Տիգրանակերտ», «Միւս Տիգրանակերտ», «Տկոնակերտ» անվամբ ավաններ[9], իսկ հնագիտական պեղումները նույն կողմերում բացել են հին բնակավայրերի ավերակներ, որոնք տեղացիների կողմից կոչվում են «Թգրանակերտ» կամ «Թաոնակերտ» անուններով[10] և լինելով վերոհիշյալ անվանումների տեղական, բարբառային ձևերն ու նրանց հետ մեկտեղ հիշեցնելով Տիգրան Մեծի անունը՝ հանդիսանում են այդ քաղաքբնակատեղերը նրա կողմից կառուցված լինելու մասին պերճախոս վկաներ: Իսկ եթե Արտաշեսյան հարստության այդ նշանավոր ներկայացուցիչն իր անունով քաղաքներ է կառուցել Ուտիք-Արցախյան աշխարհում, ապա փաստ է, որ այդ աշխարհը գտնվում էր նրա պետության սահմաններում և կազմում էր նրա բաղկացուցիչ մասը:

Արցախի հայկական պատկանելիությունը արտացոլված է նաև նրա անվանումներից մեկի մեջ՝ «Փոքր Սիւնիք»[11]: Անվանումը, որ գործածում է Մովսես Խորենացին[12], ավելի քան բավարար հիմք է ասվածը հաստատելու համար, այնքանով, որքանով նշանակում է, որ Արցախը հայոց մյուս նահանգի՝ Սյունիքի հետ երբևիցե կազմել է տարածաշրջանային մի ամբողջականություն, հետագայում զատվել նրանից և վերածվելով ինքնուրույն միավորի՝ շարունակել կրել ամբողջի անունը «Փոքր» ածականով: Այս պատմական իրողությունը պահպանվել է նաև նրա առանձին գավառների անվանումներում, ինչպես «Սիսական ի Կոտակ», որ «Փոքր Սիւնիք»-ի պահլավերեն կապակցությունն է կամ «Միւս Հաբանդ», որը լինելով Արցախի գավառներից՝ Սյունիքի համանուն գավառից տարբերելու համար ածանցվել է «Միւս» ցուցիչով և այլն: Այս Հաբանդ գավառի Ամարաս գյուղում է Գրիգոր Լուսավորիչը հիմնում ողջ Հայոց Արևելից կողմանց համար առաջին եկեղեցին, որտեղ էլ ավելի ուշ ամփոփվում է նրա թոռան՝ մասքութների կողմից հոշոտված Մանուկ Գրիգորիսի դին[13]: Եկեղեցու հիմնադրումը Արցախում, ապա և Մանուկ Գրիգորիսի մա-

---

[8] Մանրամասները տե՛ս **Г. С. Сваэян,** Арцах в исторических первоисточниках, էջ 3-14:

[9] Պատմութիւն Սեբեոսի, Երևան, 1979, էջ 125, **Մովսես Կաղանկատուացի,** Պատմութիւն Աղուանից աշխարհի, Երևան, 1983, էջ 300:

[10] **Ս. Գ. Բարխուդարյան**, Դիվան հայ վիմագրության, պր. V, Արցախ, Երևան, 1982, էջ 135:

[11] Իր երկարատև գոյության ընթացքում Արցախը հանդես է եկել զանազան աշխարհագրական անվանումներով՝ Ուրպելես, Օրքիսբենեն, Արցախ (Արձախ տարբերթերցումով), Փոքր Սիւնիք, Սիւնեաց երկրորդն, Ծավդեացվոց իշխանություն, Խաչեն, Ղարաբաղ և այլն:

[12] **Մովսէս Խորենացի,** Պատմութիւն Հայոց, Երևան, 1991, էջ 260:

[13] Բուզանդ, էջ 26:

սունքներն ի պահ տալն այնտեղ Արցախը վերածում են ողջ Հայաստանի, մասնավորապես նրա արևելից կողմանց կրոնական կենտրոնատեղերից մեկի: Հարկ չկա ասելու, որ այս հանգամանքը առավել է բարձրացնում նրա քաղաքական կշիռը և ամրապնդում դիրքը հայոց իշխանական տների համակարգում:

Արցախի հայկական պատկանելիությունն ունենալու, միաժամանակ և բուն Աղվանքի հետ ոչ մի առնչություն չունենալու մասին մի փայլուն վկայություն ունի Եղիշեն: Ըստ Վարդանանց պատերազմի պատմիչի՝ Վասակ Սյունեցին հայոց ազատագրական պատերազմի (450-451 թթ.) նախօրյակին պառակտչողական գործունեություն էր ծավալել Հայաստանում և Անդրկովկասյան երկրներում, մասնավորապես «ի Տմորիսն և ի Կորդիսն, յԱրցախ և յԱղուանսն, ի Վիրս և յաշխարհն Խաղտեաց»[14]: Այս վկայությամբ Եղիշեն ցույց տալով, որ Արցախը 5-րդ դարի կեսերին էլ Մեծ Հայքի մարզերից էր, և Աղվանքից զատ հիշատակելով մատնանշում է, որ նրանք միմյանց հետ ոչ մի կապ չունեցող առանձին-առանձին երկրներ էին:

Արցախի քաղաքական այս կացությունը պահպանվում է մինչև 5-րդ դարի երկրորդ կեսը: Ելնելով Անդրկովկասում ամուր հաստատվելու իր քաղաքականությունից՝ Սասանյան Իրանը 461 թ. բուն Աղվանքում վերացնում է թագավորական կարգը և հաստատում մարզպանական կառավարում: Կառավարման նոր համակարգին համապատասխան, մեկ միասնական վարչական, հարկային միավոր ստեղծելու նպատակով Սասանյանները Մեծ Հայքից անջատում են նրա եզերական նահանգներ Արցախն ու Ուտիքը և ընդգրկում նորաստեղծ մարզպանության կազմում[15]: Արցախը Ուտիքի հետ միասին դառնում է Աղվանից մարզպանության բաղադրիչներից մեկը և այսուհետ պատմության մեջ սկսում հանդես գալ այդ կարգավիճակով: Նրա (և Ուտիքի) վրա ևս տարածվում է ողջ մարզպանության համար ընդհանուր «Աղվանք» աշխարհագրական անվանումը: Բայց, չնայած դրան, Արցախը (և Ուտիքը) մարզպանության կազմում էլ ամբողջովին ինքնուրույն էր և բացի նորամուծ անվանումը կրելուց ուրիշ ոչ մի օրգանական կապ չուներ բուն Աղվանքի հետ:

Արցախն իր նախամարզպանական շրջանի պատմաաշխարհագրական դիրքով, վարչական կառուցվածքով և քաղաքական կարգավիճակի հետագա փոփոխություններով ցայտուն ձևով ներկայացված է «Աշխարհացույց»-ում: Վերջինիս հեղինակը բառացիորեն գրում է, որ Արցախը Մեծ Հայքի նահանգներից է և ունի տասներկու գավառ: Ապա հակաճե-հանվանե թվարկելով դրանք՝ ավելացնում, որ վերջիններս անցել են Աղվանքին՝ օտարվելով Մեծ Հայքից: Ահա այդ արժեքավոր հաղորդումը «Ժ (աշխարհ – Հ. Ս.) Արցախ, յերի կալով Սիւնեաց, ունի գաւառս երկոտասան զՄիւռն Հաբանդ, զՎակունիս, զԲերձոր, զՄեծիրանս, զՄեծկուանս, զՀարճլանս, զՄուխանս, զՊիհանս, զՊաճկանս, զՍիսականիս, զԿոտակ[16], զՔուստիփատէնս[17], զԿոխտ, յորում լինի քարախունկ. *զայս ա-*

[14] Եղիշէ, Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, Երևան, 1989, էջ 190 (ընդգծ. Հ. Ս.):

[15] Մանրամասները տե՛ս **Հ. Ս. Սվազյան**, Աղվանից մարզպանության կազմավորման հարցի շուրջը, ՊԲՀ, 1979, թիվ 4, էջ 210-218:

[16] Կարդա՛ որպես մեկ անուն «Սիսական ի Կոտակ», որն ըստ Ս. Տ. Երեմյանի՝ Միւս Հաբանդ գավառի այլ անվանումն է և հանդես է գալիս նաև «Սիսական ի Ոստան» ձևով (տե՛ս **Ս. Տ. Երեմյան,** Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի»-ի, Երևան, 1963, էջ 70, 109:

[17] Այս անվան փակ նույն հեղինակի կարծիքով պետք է տեսնել երկու՝ Քուստի և Փառնես գավառները (նույն

մենայն Աղուանք ունին հաճեալ ի Հայոց»[18]*:* Սրանով 7-րդ դարի աշխարհագետը ոչ միայն ընդգծում է Արցախի հայկական պատկանելիությունը, այլև փաստում, որ Աղվանքն իր կազմում, միևնույնն է, ընդգրկել է հայկական նահանգ:

«Աշխարհացոյց»-ի տեղեկությունները հնարավորություն են ընձեռում որոշելու նաև Արցախի գավառներին համարժեք ժամանակակից շրջանները: Ի դեպ, դրանց տեղադրումներից պարզվում է, որ արցախյան գավառների մի մասը համընկնում է այժմ արդեն ազատագրված շրջաններին:

Այսպես.

Արցախի գավառները	**Այժմյան համապատասխան շրջանները**[19]
Միւս Հաբանդ (Սիսական ի Կոտակ, Սիսականի ի Ոստան, Ամարաս)	ԼՂՀ Հադրութի շրջանը և Մարտունու Ֆիզուլիի ու Ջեբրայիլի շրջանների մի մասը
Վայկունիք (Ծար)	Քարվաճառի (Քելբաջարի) շրջանի հիմնական մասը
Բերձոր (Բերդաձոր)	ԼՂՀ Մարտակերտի շրջանի որոշ հատվածներ, մասամբ նաև Շահումյանը և Քարվաճառը
Մեծիրանք (Մեծառանք, Խաչեն)	Շահումյանից մի հատված և ԼՂՀ Մարտակերտի շրջանը
Մեծկուենք (Մեծկուանք, Մեծ Կողմանք)	ԼՂՀ Մարտակերտի և Շահումյանի շրջանների՝ Մեծառանքից դուրս մնացած մասերը
Հարճլանք (Հարջլանք, Հարժլանք)	ԼՂՀ Մարտունու շրջանի մի հատվածը և Ֆիզուլիի որոշ տարածքներ
Մուխանք (Մխանք, Մխանց տոհմ)	ԼՂՀ Մարտունու շրջանի հիմնական մասը
Պիանք (Ասպիանդք)	ԼՂՀ Ասկերանի ու Շուշիի շրջանները ոչ լրիվ և Աղդամի շրջանը
Պածկանք (Պազկանք, Պարզականք, Պարզկանք, Պաձկանք)	ԼՂՀ Ասկերանի և Շուշիի շրջանների Պիանքից դուրս մնացած մասերը
Կողթ (Կոխտ, Կոխդք)	Շահումյանի շրջանի մի մասը և Դաշքեսանի շրջանը
Փառնես (Քուստի Փառնես, Միջնարցախ)	Շամքորի շրջանի հիմնական մասը, որոշ մասեր Ղազախի ու Թովուզի շրջաններից և ՀՀ

փեղում, էջ 109): Սակայն չենք գրնում, որ մեծ գիտնականը ճիշտ է: Այսրեղ «Քուստին», ինչպես «Տուս Քուսպակ», «Քուստ ի Խորասան», «Քուստ ի Կապկոռ» կապակցություններում, օգտագործված է «կողմ»,«աշխարհ», «նահանգ» կամ «գավառ» նշանակությամբ, ուստի «Քուստի Փառնեսը» մեկ գավառի անվանում է՝ «գավառ Փառնես» իմաստով: Նմմր. **Ղ. Ինճիճյան**, Սպռրագրութիւն հին Հայաստանեայց, Վենետիկ, 1822, էջ 309:

[18] Աշխարհացոյց, էջ 33 (ընդգծ. Հ. Ս.):

[19] Անշուշտ պետք է նկատի ունենալ, որ նշված համապատասխանությունները չեն կարող լիակատար ճշգրտություն ունենալ, քանի որ վրևական ժամանակի ընթացքում նորանոր վարչական բաժանումների հետևանքով նրանց սահմանները անընդհատ փոփոխվել են և նոր ձևեր սրացել: Դրանց արդյունքն է, որ ժամանակակից շրջաններում միաժամանակ դիտվում են մի քանի գավառների առանձին մասեր:

[20] Սրանց հավելենք և ազատագրված Լաչինը, որ Սյունյաց աշխարհի Աղահեճք գավառն է և այսրեղ գրնվող Քաշաթաղ ու Խոժռռաբերդ ամրոցների անուններով հայտնի է դարձել նաև այդ անվանումներով:

Տավուշի մարզից[20]:

Այսպիսով, հայկական Արցախ նահանգի գավառների նման համապատասխանությունները ժամանակակից շրջանների հետ, թույլ են տալիս միանգամայն հիմնովին հայտարարելու, որ հայերը իրենց պարտադրված պատերազմում ազատագրել են սեփական պատմական տարածքները և, ավելացնենք, դա դեռ ամբողջը չէ:

*

* *

Արցախի՝ բուն հայկական նահանգ լինելու մասին մատենագիտական տվյալները, անշուշտ, նշվածներով չեն սահմանափակվում: Դրանք առատորեն սփռված են հին և վաղ միջնադարյան հայ հեղինակների աշխատություններում, որոնց, սակայն, մենք չենք անդրադառնա՝ համարելով, որ ներկայացրածներն էլ բավական են համոզվելու համար, որ Արցախը Հայաստանի հնագույն մարզերից մեկն է և ունի միայն ու միայն հայկական պատկանելիություն: Այն իր հայկականությունը չի կորցնում Աղվանից մարզպանության կազմում լինելով էլ և կարճ ժամանակ անց՝ մարզպանության տրոհման ժամանակ, Ուտիքի հետ միասին ձևավորում է մի ինքնուրույն վարչաքաղաքական միավոր և սկսում կառավարվել սեփական իշխանների՝ Առանշահիկների կողմից[21]:

*

* *

Հայ մատենագրության մեջ բավականաչափ հստակ տեղեկություններ կան նաև Արցախի էթնիկական կազմի մասին: Դրանց ամենամակերեսային քննությունն իսկ բերում է մի այնպիսի անվերապահ եզրակացության, որ Հայոց այս նահանգը ևս գոյության առաջին իսկ դարերից բնակեցված է եղել հիմնականում հայերով: Հայ տարրը այստեղ մշտապես մեծամասնություն է կազմել և դրանով դյուրացրել հայ ժողովրդի էթնիկական ընդհանրության հասնելու գործընթացը, որն արդեն Ն. Ք. 2-րդ դարում, ինչպես վկայում է Ստրաբոնը[22], կատարված փաստ էր: Որ Արցախը դեռևս խոր հնադարից բնակեցված է եղել հայերով, ցույց է տալիս Հայոց Վաղարշակ թագավորի պետական շինարարական գործունեության մասին Մովսես Խորենացու հաղորդումը, որի համաձայն թագավորը կուսակալություններ էր հիմնում ըստ «հայերեն խոսակցության վերջին սահմանների» («զեզերք հայկական խօսիցս») և առաջնորդվելով այդ սկզբունքով Հայոց Արևելից կողմերում, այսինքն Ուտիք-Արցախում հիմնադրում նոր նահարարություն հայկազուն կուսակալի գլխավորությամբ[23]: Նշանակում է Արցախը, որ Հայոց Արևելից կողմերում էր,

---

[21] **Կ. Ս. Սվազյան,** Աղվանքը և Միհրանյան տոհմը, Լրաբեր հաս. գիտ., Երևան, 1980, թիվ 9, էջ 91-94:

[22] **Страбон**, География, пер. статья и комментарии, Г. А. Стратановского, 1964, XI, XIV, 5. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Երևան, 1981, էջ 196:

[23] **Խորենացի,** էջ 112-113:

ուրեմն և ընկած էր «հայերեն խոսակցության վերջին սահմանների» շրջանակում, դեռևս Ն. Ք. 2-րդ դարում բնակեցված էր հայերենախոս բնիկներով կամ, այլ խոսքով, հայերով: Միջնադարյան հայ քերականները (Ստ. Սյունեցի, Եսայի Նչեցի և այլք) նրանց խոսակցական լեզուն որակել են որպես հայերենի «արցախյան» բարբառ[24] և խորհուրդ տվել մայրենի լեզվի մեջ հմտանալու համար ի շարս հայոց այլ բարբառների, լավ ուսումնասիրել նաև «արցախյանը»[25]:

Ելնելով երկրին տրվող «Առան» անվանումից՝ հայոց լեզվի այդ բարբառը արաբները կոչել են «առաներեն»[26]:

Արցախը (և Ուտիքը) վաղուց ի վեր հայերով բնակեցված լինելու մասին լավագույն ապացույցներից են այս տեղերում դպրոցների հիմնադրմանը և գրի ու գրականության տարածմանն ուղղված Մեսրոպ Մաշտոցի գործունեության նկարագրությունները պատմիչներ Կորյունի, Խորենացու և Կաղանկատվացու կողմից[27], որոնցից երևում է, որ ուսուցչապետը գործում էր հայկական միջավայրում, և նրա ջանքերը արդյունք տվեցին հայ բնակչության առկայության շնորհիվ[28]:

Արցախում, անշուշտ, ապրում էին նաև այլ ազգություններ, որոնք, սակայն, փոքրամասնություն էին կազմում և որոշիչ դեր չէին կարող ունենալ հասարակական կյանքում:

Լինելով հայոց կազմում՝ Արցախի բնակչությունը նրա հետ միաժամանակ էլ 301 թ. ընդունում է քրիստոնեություն: Ի հեճուկս ադրբեջանցի հեղինակների[29] դա են ցույց տալիս Տրդատ Գ հայոց թագավորի և Գրիգոր Լուսավորչի գործունեությունը ողջ Հայաստանում և այլ իրադարձություններ՝ կապված Արցախի հետ[30]:

Այսպիսով, հայ հին և վաղ միջնադարյան պատմիչների ու աշխարհագետների հաղորդումները անվերապահորեն ցույց են տալիս, որ Արցախը հայոց հինավուրց նահանգներից էր, ուներ հայ բնակչություն, որ 301 թ. համայն հայության հետ ընդունեց քրիստոնեություն, իր ներդրումն ուներ Հայոց աշխարհի քաղաքական կյանքում և հանդիսանում էր նրա հոգևոր ու մշակութային կարևոր օջախներից մեկը: Հետևաբար, ադրբեջանցի ուսումնասիրողների կողմից Արցախը Աղվանից մարզ հայտարարելու և նրան իր հայ բնակչությունից զրկելու ջանքերը ապարդյուն են, հանդիսանում են կեղծարարության

---

[24] Այժմյան Ղարաբաղի բարբառը: Մանրամասն տե՛ս **Բ. Ուլուբաբյան**, Դրվագներ ..., էջ 54-107:

[25] **Н. Адонц,** Диоиисий Фракийский и Армяиские толкователи, Пг. 1915, էջ 187, Եսայի Նչեցի, Վերլուծութիւն քերականութեան, աշխատասիրությամբ Լ. Գ. Խաչերյանի, Երևան, 1966, էջ 65:

[26] **Н. А. Караулов,** Сведеиия арабских иисателей о Кавказе, Армеиии и Азербайджане (Сбориик материалов для оиисаиия местностей и илемеи Кавказа, выи. 29, Тифлис, 1901, с. 29, выи. 38, Тифлис, 1908, с. 12).

[27] **Կորյուն,** Վարք Մաշտոցի, Երևան, 2005, էջ 74, **Խորենացի,** էջ 328, **Կաղանկատվացի**, էջ 95, 117-118:

[28] Մանրամասն տե՛ս **Ա. Շ. Մնացականյան,** Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, Երևան, 1966:

[29] Ֆ. Մամեդովայի կարծիքով Արցախը քրիստոնեություն է ընդունել Աղվանքի հետ 313 թ. Աղվանից առաջին քրիստոնյա թագավոր Ուռնայրի ժամանակ (տե՛ս Ф.Мамедова, Политическая история ... , էջ 186 և հաջ.): Սակայն, խնդրի առնչությամբ կատարված քննությունը ցույց է տվել, որ Ուռնայրը Աղվանքում թագավորել է 4-րդ դարի 60-70-ական թթ. և քրիստոնեությունն էլ այստեղ պետական կրոն է հռչակվել դարի 70-ական թթ. կեսերին (տե՛ս **Ն. Ս. Սվազյան**, Ավատրափիրական հարաբերություններն Աղվանքում և քրիստոնեության հռչակումը որպես պետական պաշտպանական կրոն, ՊՔՀ, Երևան, 2003, թիվ 3), երբ Արցախը վաղուց արդեն քրիստոնյա էր:

[30] Մանրամասն տե՛ս **Г. С. Саазян,** Арцах в исторических иервоисточииках, էջ 13:

շղթայի այն օղակներից, որոնցով ընդհանրապես պարուրել են նրանք Արցախի ողջ պատմությունը և ոչ մի կապ չունեն այն գիտության հետ, որի անունից հանդես են գալիս: